ԳՈՐԾՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ 2015-2018 ԹԹ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Լեհաստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ «Կողմեր»,

- առաջնորդվելով երկու երկրների և ժողովուրդների միջև ավանդական բարեկամական և բարիդրացիական հարաբերությունները զարգացնելու և ամրապնդելու սկզբունքով,
- հաստատելով, որ համագործակցությունը մշակույթի, գիտության և կրթության ոլորտներում կնպաստի երկու երկրների հասարակությունների միջև հարաբերությունների ջերմացմանը, գործընկեր երկրի պատմության և ներկայի վերաբերյալ գիտելիքների, ինչպես նաև փոխադարձ ձեռքբերումների տարածմանը,
- ձգտելով կիրառել 1998 թ. հունվարի 27-ին Վարշավայում ստորագրված Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լեհաստանի Հանրապետության Կառավարության միջև մշակութային և գիտական համագործակցության մասին Համաձայնագիրը,

Պայմանավորվեցին ներքոգրյալի մասին.

I. Մշակույթ և արվեստ

Հոդված 1

Կողմերը կաջակցեն կինեմատոգրաֆիայի բնագավառում ֆիլմարտադրության ոլորտի հաստատությունների, կազմակերպությունների և այլ անձանց անմիջական համագործակցությանը, ֆիլմարտադրական ծառայությունների ապահովմանը, ֆիլմերի փոխանակումներին, կինո ցուցադրությունների փոխադարձ կազմակերպմանը և մասնակցությանը մյուս Կողմի տարածքում կազմակերպվող միջազգային կինոփառատոներում՝ համաձայն այդ փառատոների պայմանների:

Հոդված 2

1. Կողմերը կաջակցեն մյուս կողմի երգահանների գործերի տարածմանը:
2. Կողմերը կապահովեն երկու երկրների երաժշտական հաստատությունների միջև ուղղակի համագործակցությունը:
3. Կողմերը, որքանով որ հնարավոր է, կաջակցեն վարպետության

դասընթացների և սեմինարների կազմակերպմանը երաժշտության բնագավառում, ինչպես նաև «"I, CULTURE Orchestra"» ծրագրի իրականացմանը:

Հոդված 3

Կողմերը կխրախուսեն իրենց արվեստագետների և խմբերի մասնակցությունը մյուս Կողմի տարածքում իրականացվող միջազգային փառատոներին և այլ կարևոր մշակութային միջոցառումներին:

Հոդված 4

Կողմերը կխրախուսեն թանգարանների միջև ուղղակի պայմանավորվածությունները, այդ թվում՝ հավաքածուների փոխադարձ ցուցադրմանն ու ցուցահանդեսների կազմակերպմանն ուղղված միջոցառումները:

Հոդված 5

Կողմերը կնպաստեն ոչ նյութական ժառանգության բնագավառում համագործակցությանը և կդյուրացնեն իրենց ներկայացուցիչների մասնակցությունը մյուս Կողմի կազմակերպած ժողովրդական փառատոներին և ժողարվեստի և արհեստագործական միջոցառումներին:

Հոդված 6

1. Կողմերը կդյուրացնեն ուղղակի կապերը հուշարձանների և հնագիտության պաշտպանության և վերականգնման պատասխանատու հաստատությունների միջև: Կողմերը կօժանդակեն այս բնագավառում համատեղ ծրագրերին:
2. Կողմերը կհամագործակցեն երկու երկրների տարածքում գտնվող երկու ազգերի ընդհանուր մշակութային ժառանգություն կազմող հուշարձանների պաշտպանության գործում:

3. Լեհական Կողմը հրավիրում է հայ հետազոտողներին մասնակցելու Կրակովի մշակութային կենտրոնի կողմից համակարգվող "Thesaurus Poloniae" կրթաթոշակային ծրագրին: Ծրագիրը նախատեսված է Լեհաստանի պատմության և մշակութային ժառանգության՝ օտարերկրյա հետազոտողների համար:

Հոդված 7

1. Կողմերը կմասնակցեն իրենց մշակութային ժառանգության մաս կազմող մշակութային սեփականության ապօրինի ներմուծումը, արտահանումը և տեղաշարժը կանխելու ուղղությամբ՝ իրենց ներքին օրենքներին և այն միջազգային կոնվենցիաներին համապատասխան, որոնց միացած են երկու երկրները:
2. Կողմերը համաձայնում են, որ մեկ Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք ապօրինաբար արտահանված մշակութային արժեքները պետք է վերադարձվեն:

Հոդված 8

Կողմերը կնպաստեն երկու երկրների պետական արխիվների միջև ուղղակի համագործակցությանը, գիտական, սոցիալական և իրավական նպատակներով մատչելիության հատուկ հղումով՝ արխիվների միջև ուղղակի պայմանագրի համաձայն:

Հոդված 9

Կողմերը կաջակցեն և կզարգացնեն երկու երկրների գրադարանների միջև ուղղակի համագործակցությունը:

II. Գիտություն և կրթություն

Հոդված 10

Իրենց համագործակցության ընթացքում Կողմերը հատուկ ուշադրություն կդարձնեն հետևյալ հարցերին.

1) իրենց կրթական համակարգի, զարգացման ծրագրերի և բարեփոխումների ուղղությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,
2) վերապատրաստումներ Կողմերի համար առաջնային հետաքրքրություն ներկայացնող մասնագիտությունների գծով,
3) աջակցություն դպրոցների և ուսումնական հաստատությունների միջև համագործակցությանը՝ բոլոր մակարդակներում,
4) աջակցություն համատեղ գիտական միջոցառումներ, կոնֆերանսներ, գիտաժողովներ, երիտասարդական օլիմպիադաներ և մրցույթներ կազմակերպելու համար:

Հոդված 11

1. Կողմերը կաջակցեն երկու երկրների գիտությունների ակադեմիաների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և այլ գիտական հաստատությունների միջև ուղիղ կապերի հաստատմանը հետևյալ ոլորտներում.
   1) համատեղ գիտական հետազոտություններ,
   2) փոխանակման ծրագրեր անձնակազմի, գիտնականների և մասնագետների համար դասախոսություններ անցկացնելու, ինչպես նաև համագումարներում, գիտական սեմինարներում, համաժողովներում և գիտաժողովներում մասնակցության համար,
   3) գիտական հրապարակումների և տեղեկատվության փոխանակում,
2. Երկու երկրների շահագրգիռ հաստատությունները կսահմանեն իրենց բնագավառներում համագործակցության և դրա ֆինանսական միջոցառումների շրջանակը:

Հոդված 12

Յուրաքանչյուր տարի հայկական Կողմը լեհական Կողմին կտրամադրի ընդհանուր 18 ամիս տևողությամբ գիտահետազոտական ծրագիր, յուրաքանչյուրը մեկից ինը ամիս տևողությամբ, ազատելով վարձից՝ առանց կրթաթոշակ ստանալու իրավունքի:

Հոդված 13

Յուրաքանչյուր տարի լեհական Կողմը հայկական Կողմին կտրամադրի՝

1) մինչև 4 տեղ՝ առաջին աստիճանի, երկրորդ աստիճանի կամ մաստեր աստիճանի ծրագրերի բարձրագույն կրթություն ստանալու համար
2) երկու տեղ՝ հետբուհական /ասպիրանտական/ տարբեր ոլորտներում կրթություն ստանալու համար՝ ազատելով ուսման վարձից՝ առանց կրթաթոշակ ստանալու իրավունքի;
3) ընդհանուր 10 ամիս տևողությամբ գիտահետազոտական ծրագիր, յուրաքանչյուրը մեկից ինը ամիս տևողությամբ, ազատելով վարձից՝ առանց կրթաթոշակ ստանալու իրավունքի:

Բարձրագույն կրթության հաստատությունները գտնվում են Կրթության և գիտության նախարարության ենթակայության ներքո:

Հոդված 14

Հայկական Կողմի հրավերով լեհական Կողմը կգործուղի լեհերեն լեզվի մասնագետների Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատելու նպատակով:

Հոդված 15

1. Հայկական Կողմի հրավերով լեհական Կողմը կգործուղի լեհերեն լեզվի ուսուցիչների՝ Հայաստանի Հանրապետության դպրոցներում աշխատելու նպատակով:
2. Հայկական Կողմը կստեղծի պայմաններ լեհերեն լեզվի ուսումնասիրության համար լեհական ծագում ունեցող ՀՀ քաղաքացիների համար:

III. Տեղեկատվություն

Հոդված 16

1. Կողմերը կխրախուսեն տեղեկատվության փոխանակումը երկու երկրների համապատասխան հաստատությունների միջև:
2. Կողմերը կաջակցեն հրապարակումների փոխանակմանը և երկու երկրների պատմության, աշխարհագրության, մշակույթի վերաբերյալ ուսուցման դյուրացմանն ու ներկայացմանը:

Հոդված 17

Կողմերը կխրախուսեն ուղիղ համագործակցությունը երկու երկրների ռադիոյի և հեռուստատեսության բնագավառներում: Յուրաքանչյուր համագործակցություն կիրականացվի շահագրգիռ հաստատությունների միջև առանձին երկկողմ համաձայնագրերի միջոցով:

IV. Երիտասարդություն և սպորտ

Հոդված 18

Կողմերը կաջակցեն փոխանակումներն ու համագործակցությունը երկու երկրների երիտասարդական կազմակերպությունների միջև՝ առաջնորդվելով այդ կազմակերպությունների միջև ստորագրված համաձայնագրերով:

Հոդված 19

1. Կողմերը կաջակցեն երկու երկրների սպորտային ֆեդերացիաների, ասոցիացիաների և ակումբերի միջև ուղիղ համագործակցությանը:
2. Համագործակցությունը սպորտային հաստատությունների միջև ներառում է.
   1) սպորտային ուղղությունների հանրայնացում,
   2) գիտական, մեթոդաբանական նյութերի և փորձի փոխանակում,
   3) մարմնամարզության և սպորտի մասնագետների համար որակավորման դասընթացների և սեմինարների կազմակերպում,
   4) սպորտային միջոցառումների անվտանգության և հակադոպինգային միջոցների, սպորտային վերականգնման ոլորտի փորձագետների փոխանակում,
   5) սպորտային տարբեր ուղղությունների մարզիչների և մրցավարների փոխանակում:
3. Երկու երկրների շահագրգիռ կազմակերպությունները քայլեր կձեռնարկեն փոխանակման շրջանակները սահմանելու և ֆինանսական միջոցներն ապահովելու համար:

Հոդված 20

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը Միացյալ ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) հետ մշակույթի, կրթության և գիտության բնագավառներում ուղիղ համագործակցություն ծավալելու հարցում՝ իրենց ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովների միջոցով:

V. Անհատների փոխանակում

Հոդված 21

Անհատների փոխանակումները կիրագործվեն բարձրագույն և հետբուհական կրթության, գիտահետազոտական ծրագրերի շրջանակներում: Այն կներառի նաև լեհերեն լեզվի ու մշակույթի և լեհերեն լեզվի ուսուցիչների համար ծրագրեր կարճաժամկետ այցերի միջոցով:

Հոդված 22

1. Կողմերը՝ սույն ծրագրի համաձայն՝ անհատների մասնակցությունն ու փոխանակումները կիրականացնեն բժշկական ապահովագրության հիման վրա, որը կծածկի մյուս երկրի տարածքում գտնվելու ժամանակ անհատի բոլոր ծախսերը՝ կապված ճամփորդության, դժբախտ պատահարների,

առողջական խնդիրների հետևանքով նրա վերադարձի, շտապ բուժօգնության ցուցաբերման և հոսպիտալացման հետ՝ ներառյալ մահվան դեպքը:

2. Սույն ծրագրի շրջանակներում անհատների մուտքի և կեցության հետ կապված խնդիրների կանոնակարգումը կիրականացվի Կողմերի ներքին օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 23

Անհատների փոխանակման ժամկետները և պայմանները համաձայն Սույն ծրագրի 12 և 13 հոդվածների.

1) Ընդունող կողմը կապահովի.
   ա) պետական բարձրագույն ուսումնական կամ ասպիրանտական կրթություն ապահովող հաստատություններում անվճար կրթություն (Լեհաստանի Հանրապետությունում համակարգողը՝ Գիտության և բարձրագույն կրթության նախարարությունն է),
   բ) վճարովի ակադեմիական հանրակացարանից օգտվելու հնարավորություն:
2) Ուղարկող Կողմը մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 30-ը դիվանագիտական խողովակներով Ընդունող Կողմին կփոխանցի հաջորդ ակադեմիական տարվա թեկնածուների փաստաթղթեր:
3) Մասնակիցները կհոգան իրենց ճանապարհածախսը և կեցության ծախսերը՝ ողջ ուսման ընթացքում՝ այդ թվում տեղափոխման ծախսը դեպի ուսուցման վայր և հակառակը:

Հոդված 24

Սույն ծրագրի 14 և 15 հոդվածների համաձայն Հայաստանի Հանրապետություն գործուղվող լեհերեն լեզվի և գրականության մասնագետների, ինչպես նաև լեհերեն լեզվի ուսուցիչների աշխատանքային ժամկետներն ու պայմանները կկանոնակարգվեն.

1) Հայկական Կողմը կտրամադրի.
   ա) ամսական աշխատավարձ և վճարվող արձակուրդներ,
   բ) անվճար կեցություն՝ չհաշված հեռախոսավարձերը,
   գ) անհրաժեշտ բժշկական օգնություն՝ տեղական առողջապահական խնամքի կանոնակարգերին համապատասխան,
   դ) աջակցություն լեհերեն լեզվի և գրականության մասնագետների և ուսուցիչների գործուղման հետ կապված անհրաժեշտ պայմանների (աշխատանքի թույլտվություն,

բնակության գրանցում, մեկ տարվա վիզա և այլն) ապահովման համար:

2) Լեհական Կողմը կհատուցի լեհերեն լեզվի և գրականության մասնագետների և ուսուցիչների ճանապարհածախսը:
3) Լեհական Կողմը դիվանագիտական ուղիներով Հայկական Կողմին կփոխանցի լեհերեն լեզվի և գրականության մասնագետների և ուսուցիչներիփաստաթղթերը:

Հոդված 25

Սույն Ծրագրի շրջանակներում գործուղված մասնակիցները՝ ուսանողները, ասպիրանտները և հետազոտողները կշարունակեն իրենց կրթությունն ու ուսումնասիրությունը՝ նախապես սահմանված պայմաններով և ժամկետներում:

Հոդված 26

Սույն Ծրագրի կիրարկման հետ կապված անհատական փոխանակումները կիրականացվեն ստորև ներկայացված հետևյալ պայմաններով.

1) Ընդունող Կողմը անհատական տվյալները կարող է օգտագործել բացառապես սույն Համաձայնագրի նպատակների համար և բացառապես ուղարկող Կողմի նշած ժամկետներում և պայմաններով:
2) Անձնական տվյալների փոխանցման ժամկետներն ավարտվելուց հետո դրանք պետք է անհապաղ ոչնչացվեն՝ նախապես տեղեկացնելով այդ մասին ուղարկող Կողմին,
3) Կողմերը պատասխանատվություն են կրում տրամադրված անձնական տվյալների հավաստիության համար: Եթե ներկայացված տվյալները ստույգ չեն և ենթակա չեն ճշգրտման, ուղարկող Կողմը պարտավոր է անհապաղ տեղեկացնել ընդունող Կողմին, որն անմիջապես կուղղի կամ կոչնչացնի այդ տվյալները:
4) Ընդունող Կողմը պետք է պատշաճ կերպով պահպանի անհատական տվյալները՝ չարտոնված մուտքից, չարտոնված օգտագործումից, փոփոխություններից, կորստից, վնասումից և ոչնչացումից:
5) Անհատը, ում անհատական տվյալները փոխանցվել են, իրավունք ունի.

ա) տեղեկատվություն ստանալ ընդունող և ուղարկող Կողմերի, ինչպես նաև ընդունող Կողմից այդ տվյալների օգտագործման նպատակի վերաբերյալ,

բ) Տվյալ տեղեկատվության նկատմամբ հասանելիության իրավունքով կատարել փոփոխություններ:

VI. Ընդհանուր և եզրափակիչ դրույթներ

Հոդված 27

Սույն Ծրագիրը չի խոչընդոտում մշակույթի, գիտության և կրթության բնագավառներում համագործակցության այլ ձևերի կիրարկման հնարավորությունը՝ դիվանագիտական ուղիներով դրանք համաձայնեցնելու պայմանով:

Հոդված 28

Կողմերը դիվանագիտական հայտագրերի գրավոր փոխանակման միջոցով ոչ ուշ քան յուրաքանչյուր տարվա ավարտից 60 օր առաջ կարող են փոփոխել սույն Ծրագրի գործողության շրջանակը՝ համաձայն սույն Ծրագիրը ուժի մեջ մտնելու համար նախատեսված անհրաժեշտ ընթացակարգերի:

Հոդված 29

1. Սույն Ծրագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է մինչև նոր ծրագրի ուժի մեջ մտնելը, բայց ոչ ուշ քան 2019 թ. դեկտեմբերի 31-ը:
2. Սույն ծրագրի գործողության ժամկետը ավարտվում է Կողմերի՝ 1 կետում նշված ժամանակահատվածից ոչ շուտ: Այդ պարագայում, Կողմերը՝ Ծրագրի ավարտից 90 օր առաջ միմյանց տեղեկացնում են Ծրագիրը դադարեցնելու մասին:

Կատարված է Երևանում 30.09.2015թ-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, լեհերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Մեկնաբանման ընթացքում որևէ տարաձայնության դեպքում գերակայությունը տրվում է անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝	ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

PROGRAMME OF IMPLEMENTATION BETWEEN THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF POLAND IN THE FIELDS OF CULTURE, SCIENCE AND EDUCATION FOR THE YEARS 2015-2018

The Government of the Republic of Armenia and the Government of the Republic of Poland, hereinafter referred to as "the Parties,"

- Conscious of the need to strengthen and develop the traditionally good and friendly relations between the two countries and peoples,
- Confident that cooperation in the fields of culture, science and education will enhance closer relations between the societies of the two countries, dissemination of knowledge about the history and present day of the partner country, as well as mutual promotion of achievements,
- Seeking to implement the Agreement between the Government of the Republic of Armenia and the Government of the Republic of Poland on Cultural and Scientific Cooperation, signed in Warsaw on 27 January 1998,

Have agreed as follows:

I. Culture and art

Article 1

In the field of cinematography, the Parties shall support direct cooperation of institutions, organisations and other entities in the area of film production, provision of film-making services, exchange of films, mutual organisation of film screenings and participation in international film festivals organised in the territory of the Parties, in accordance with the rules of such festivals.

Article 2

1. The Parties shall facilitate the promotion of works by composers of the other Party.
2. The Parties shall promote direct cooperation between music institutions from the two countries.
3. The Parties, to the extent practicable, shall support the organisation of master courses and workshops in the field of music, as well as the implementation of the "I, CULTURE Orchestra" project.

Article 3

The Parties shall encourage the participation of their artists and groups in international artistic festivals and other important cultural events in the territory of the other Party.

Article 4

The Parties shall encourage direct agreements between museums, including measures aimed at the mutual presentation of collections and organisation of exhibitions.

Article 5

The Parties shall promote cooperation in the field of intangible heritage, and facilitate the participation of their representatives in folk festivals and folk art and handicraft events organised in the other Party.

Article 6

1. The Parties shall facilitate direct contacts between institutions responsible for the protection and restoration of monuments and archaeology. The Parties shall support the implementation of joint projects in these fields.
2. The Parties shall cooperate to protect monuments constituting the common cultural heritage of the two nations, situated in the territory of the two countries.
3. The Polish side invites Armenian researchers to participate in the "Thesaurus Poloniae" scholarship programme, coordinated by the International Cultural Centre in Krakow; the programme is addressed to foreign researchers of the history and cultural heritage of the Republic of Poland.

Article 7

1. The Parties shall cooperate to prevent the illicit import, export and transfer of the ownership of cultural property constituting their cultural heritage, in compliance with their domestic laws and international conventions to which the two countries are party.
2. The Parties agree that cultural property illicitly exported from the territory of one Party and illicitly imported into the territory of the other Party shall be returned.

Article 8

The Parties shall promote direct cooperation between the state archives of the two countries, with particular reference to the access to archives for scientific, social and legal purposes, pursuant to direct agreement between such archives.

Article 9

The Parties shall support and develop direct cooperation between the libraries of the two countries.

II. Science and education

Article 10

In their cooperation, the Parties shall devote particular attention to the following issues:

1) exchange of information on their systems of education, plans of their development and directions of reforms;
2) in-service training of teachers and training of experts in fields of particular interest to both Parties;
3) promoting cooperation between schools and educational institutions at all levels;
4) promoting joint scientific events, conferences, symposia, youth Olympiads of knowledge and school competitions.

Article 11

1. The Parties shall act to establish contacts and direct cooperation between academies of science, higher education institutions and other scientific institutions of the two countries in the areas of:
   1) joint scientific research;
   2) exchange of teaching staff, scientists and experts for the purposes of conducting lectures and participating in scientific congresses, seminars, conferences and symposia;
   3) exchange of scientific publications and information.
2. The relevant institutions from the two countries shall determine in detail the areas of their cooperation and related financial issues.

Article 12

Each year, the Armenian side shall grant the Polish side a total of 18 months of research internships, lasting from one to nine months each, tuition-free, and without scholarship benefits.

Article 13

Each year, the Polish side shall grant the Armenian side:

1) up to four places at first-cycle programmes, second-cycle programmes or long-cycle Master's degree programmes;
2) two places at PhD studies in different fields, tuition-free, and without scholarship benefits;

3) a total of ten months of research internships lasting from one to nine months each, tuition-free, and without scholarship benefits,

at higher education institutions subordinate to the Minister of Education and Science.

Article 14

At the invitation of the Armenian side, the Polish side shall delegate teaching staff specialising in the Polish language and literature to work at higher education institutions in the Republic of Armenia.

Article 15

1. At the invitation of the Armenian side, the Polish side shall delegate Polish teachers to teach at schools in the territory of the Republic of Armenia.
2. The Armenian side shall create conditions to learn Polish, in particular for Armenian citizens of Polish descent.

III. Information

Article 16

1. The Parties shall support the exchange of information between the relevant institutions of the two countries.
2. The Parties shall support the exchange of publications and teaching aids facilitating the presentation of history, geography and culture of the two countries.

Article 17

The Parties shall support direct cooperation in the field of radio and television broadcasting in the two countries. Such cooperation shall be implemented on the basis of separate bilateral agreements concluded by relevant entities.

IV. Youth and sport

Article 18

The Parties shall promote the exchange and cooperation between youth organisations of the two countries conducted on the basis of agreements concluded by these organisations.

Article 19

1. The Parties shall support direct contacts between sports federations, associations and clubs of the two countries.
2. The cooperation between sports institutions shall include:

1) popularisation of sports disciplines;
2) exchange of experiences and scientific and methodological materials;
3) organisation of seminars and training sessions to enhance the qualifications of physical culture and sports specialists;
4) exchange of experts in the fields of recreational sports, anti-doping measures and security at sports events;
5) exchange of coaches and training staff in various sports disciplines.

3. The relevant institutions of the two countries shall determine the terms of exchange and related financial issues.

Article 20

The Parties shall support cooperation within the United Nations Educational, Scientific and Cultural Organisation (UNESCO) in the fields of culture, education and science, as well as direct cooperation in these fields between their National Commissions for UNESCO.

V. Exchange of persons

Article 21

The exchange of persons shall take place in the framework of higher studies, PhD studies, and scientific and research internships. It shall also take the form of secondment programmes for teaching staff specialising in the Polish language and culture and Polish language teachers, as well as short visits.

Article 22

1. The Parties shall ensure that persons participating in exchanges under the present Programme have relevant valid travel health insurance covering all costs which may arise during their stay in the territory of the other Party as a result of the need to return for health reasons, urgent medical treatment, emergency hospital treatment or death.
2. Rules of entry and stay in connection with the implementation of the present Programme are defined by domestic laws of the Parties.

Article 23

Terms and conditions for the exchange of persons under Articles 12 and 13 of the present Programme:

1) The Receiving Party shall provide:
   a) tuition-free education or internships at state higher education institutions or institutions authorised to conduct PhD studies (in the Republic of Poland—those subordinate to the Minister of Sciences and Higher Education),
   b) the possibility of paid accommodation at student halls.

2) The Sending Party shall provide the Receiving Party with the documents of candidates for the next academic year through diplomatic channels, by 30 April each year.
3) The participant shall cover the costs of accommodation and board during studies, as well as the costs of travel to and from the place of studies.

Article 24

Terms and conditions for the secondment of teaching staff specialising in language and literature delegated to work in the Republic of Armenia under Article 14 and of Polish language teachers delegated to work in the Republic of Armenia under Article 15 of the present Programme:

1) The Armenian side shall provide:
   a) monthly salaries and paid holidays,
   b) free-of-charge accommodation, excluding payment of telephone bills,
   c) basic medical care as determined in domestic health care regulations,
   d) assistance with the formalities required for the employment of a teaching staff member specialising in the Polish language and literature or a Polish language teacher (work permit, residency registration, one-year visa, etc.).
2) The Polish side shall cover the costs of travel of teaching staff specialising in the Polish language and literature and of Polish language teachers to and from the place of employment.
3) The Polish side shall provide the Armenian side with the documents of the teaching staff member specialising in the Polish language and literature or the Polish language teacher through diplomatic channels.

Article 25

Persons who have begun higher studies, PhD studies or an internship before the entry into force of the present Programme shall continue their education until its planned conclusion on terms stipulated beforehand.

Article 26

Personal data shall be exchanged in connection with the implementation of this Programme under the following conditions:

1) The receiving Party may use personal data solely for the purposes of this Agreement and solely on the terms and conditions as specified by the providing Party;
2) After the expiry of the purpose for transmitting personal data, they shall be immediately destroyed and the providing Party shall be notified thereof;
3) The Parties shall be liable for the veracity of the provided personal data. Should the provided data be inaccurate or not eligible for disclosure, the providing Party shall immediately notify the receiving Party thereof, which shall immediately correct or destroy such data;
4) The receiving Party shall effectively keep personal data secure from unauthorised access,

unauthorised use, modification, loss, corruption or destruction;

5) Person whose personal data have been transferred shall have the right to:
   a) Receive information about the providing and receiving Parties, and the intended use of such data from the receiving Party,
   b) Be given access to his or her data and make changes thereto.

VI. General and final provisions

Article 27

The present Programme shall not exclude the possibility of implementing other forms of cooperation in the fields of culture, science and education, on condition that they are agreed upon through diplomatic channels.

Article 28

The Parties shall be able to amend the scope of the present Programme by way of exchanging diplomatic notes, not later than 60 days before the end of the calendar year. Amendments shall enter into force in accordance with the procedures that are necessary for the entry into force of the present Programme.

Article 29

1. The present Programme shall enter into force on the date of its signature, and shall remain in force until the entry into force of a new Programme, but no longer than until 31 December 2019.
2. The present Programme may be terminated at an earlier date than that stipulated in paragraph 1 by either Party. In such case, the Party wishing to terminate the Programme shall notify its intention to the other Party not less than 90 (ninety) days before the proposed date of termination.

Done at Warsaw this 30 day of September 2015 in duplicate, each in the Polish, Armenian and English languages, all texts being equally authentic. In the case of divergences of interpretation, the English text shall prevail.

FOR THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

FOR THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF POLAND